ԳԵՎՈՐԳ ԿԵՍՈՅԱՆ, ԵՎԳԻՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱԱ

ՋԱԼԱԼՕՂԼՈՒ ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏ

Հայ իրականության մեջ դպրոցների ստեղծման գործում իր անուրանալի ավանդն ունի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, որը մշտապես հոգ է տարել դպրոցական կյանքի կանոնավոր ընթացքի եւ առաջընթացի մասին: Եկեղեցու ուշադրության արդյունք էր նաեւ Ջալալօղլու[1] ծխական-եկեղեցական դպրոցի հիմնումը:

Դպրոցաշինական կյանքը վերելք է ապրել ԺԹ. դարում. այս գործընթացից անմասն չի մնացել նաեւ Բորչալուի գավառի Ջալալօղլին[2]: 1878 թ. որոշվում է գյուղում հիմնել արական միդասյա դպրոց[3]: Հաջորդ տարում որոշվում է հիմնել նաեւ իգական միդասյա դպրոց[4]՝ կրթություն ստանալու հնարավորություն ստեղծելով երկու սեռի ներկայացուցիչների համար: Դպրոցի կանոնավոր գործունեությունն սկսել է 1879-1880 ուսումնական տարվանից, որը եւ, կարծում ենք, հիմք է ծառայել արխիվային որոշ փաստաթղթերում դպրոցի հիմնադրման թվականը 1879 նշելու համար: Նշենք նաեւ, որ Ջալալօղլու դպրոցը Բորչալուի գավառում բացված դպրոցներից առաջինն է[5]:

Առկա է թյուրըմբռնում՝ դպրոցի հիմնադրի հետ կապված. գյուղի բնակչությունը պնդում է, որ այն հիմնադրվել է Տիգրան Տեր-Դավթյանի[6] կողմից: Փաստաթղթերը ցույց են տալիս, որ Տ. Տեր-Դավթյանի եւ

---

[1] 1923 թ. վերանվանվել է Ստեփանավան՝ ի պատիվ Ստեփան Շահումյանի:

[2] Ջալալօղլին ընդգրկված է եղել Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Լոռու շրջանում՝ Վրաստանի եւ Իմերեթի թեմի ենթակայության ներքո (այժմ Ստեփանավանի տարածքում է):

[3] Տես ՀՀ ազգային արխիվ, ֆ. 637, ց. 1, գ. 286, թ. 66:

[4] Տես անդ, թ. 67:

[5] Տես անդ, ֆ. 56, ց. 1, գ. 7064, թ. 15:

[6] Տիգրան Տեր-Դավթյանը ծնվել է 1853 թ. Տփղիս քաղաքի Բեթղեհեմ թաղի Ս. Աստվածածին եկեղեցու քահանա Հովհաննես Դավթյանի եւ Կատարինեի ընտանիքում: Եղել է դպիր նույն եկեղեցում, երգի խմբի ղեկավար, քարոզիչ, Վրաստանի եւ Իմերեթի թեմի հայկական դպրոցների տեսչի օգնական, Մարց գյուղի եկեղեցու կալվածքների

դպրոցի կապը սահմանափակվում է դպրոցի համար նախատեսված տան առքուվաճառքի շրջանակում: 1879 թ. դպրոցի հոգաբարձուները (Եգոր Քալանթարյանց, Սարգիս Տեր-Գրիգորյանց, Մովսես Խանաղյանց, Սարգիս Հակոբյանց) Տ. Տեր-Դավթյանցից 2000 ռուբլով գնում են նրա տունը՝ դպրոց հիմնելու նպատակով[7]: Եթե Տ. Տեր-Դավթյանը հիմնադիրը լիներ, նա ոչ թե կվաճառեր, այլ կնվիրեր իր տունը: Ավելին՝ 1887 թ. վերաբացումից հետո դպրոցը գործել է վարձակալված շենքում: Այսինքն՝ Տ. Տեր-Դավթյանից գնված տունը հետ է վերադարձվել[8]: Հաջորդ հանգամանքը, որը ժխտում է Տ. Տեր-Դավթյանի՝ դպրոցի հիմնադիր լինելու վարկածը, այն է՝ դպրոցի հիմնադիրները կաթողիկոսական կոնդակով դառնում են հոգաբարձուների խորհրդի պատվավոր նախագահ: Ինչպես տեսնում ենք, վերը նշված հոգաբարձուների շարքում Տ. Տեր-Դավթյանի անունն առկա չէ: Երրորդ փաստը 1893-1894 թթ. տարեկան տեղեկագրի հաղորդած տեղեկությունն է, համաձայն որի՝ Ջալալօղլու թե՛ արական եւ թե՛ իգական դպրոցները բացել է «գիւղական հասարակութիւնը իւր հաշուով»[9]:

Ցարական կառավարությունը, ցավոք, վարում էր կոշտ քաղաքականություն ազգային փոքրամասնությունների կրթամշակութային կյանքի հանդեպ, որի հետեւանքով ազգային կրթօջախները պարբերաբար փակվում էին: Այս քայլով կայսրությունը նպատակ ուներ ազգերին կտրել իրենց մշակույթից եւ այդպիսով արագացնել նրանց ուծացումը: Բարեբախտաբար, մենք՝ հայերս, պայքարել ենք մեր ինքնության դեմ կատարված այդ ոտնձգությունների դեմ եւ դպրոցների ապօրինի փակմանը հակադրել դրանց վերաբացումը:

Ջալալօղլու դպրոցն առաջին անգամ փակվել է 1880-ական թվականների կեսերին: Վրաստանի եւ Իմերեթի թեմի հայկական դպրոցների վերատեսչի օգնական Տ. Տեր-Դավթյանի՝ թեմի առաջնորդին ուղարկած 1885 թ. ապրիլի 3-ի գրության մեջ կարդում ենք. «...ուսումնարանք Ջա-

---

կառավարիչ (2 անգամ քահանա ձեռնադրվելու անհաջող փորձ է կատարել):

[7] Տես անդ, ֆ. 53, ց. 1, գ. 3997, թ. 136 եւ 139:

[8] 1886 թ. դպրոցի հոգաբարձուների եւ գյուղի հասարակության կողմից ընտրված հաշվետեսների միջեւ կնքված համաձայնությունից պարզ է դառնում, որ տան գնման համար նախատեսված 2000 ռուբլին չի վճարվել: Սույն համաձայնությամբ պայմանավորվում են, որ հոգաբարձուները պարտավորվում են վճարել 1000 ռուբլի, իսկ մյուս կեսը պետք է «զեղչվեր» Տ. Տեր-Դավթյանի կողմից: Կարելի է ենթադրել, որ նոր պայմանների հետ Տ. Տեր-Դավթյանը չի համաձայնել, եւ տունը վերադարձվել է:

[9] Անդ, ֆ. 637, ց. 1, գ. 286, թ. 66 եւ 67:

լալ-օղլուոյ փակեցան ի ձեռն պրիստաւին Լօռուոյ՝ ի 27 մարտի»[10]:

Գործունեության առաջին շրջանում Ջալալօղլու դպրոցն աշակերտների թվաքանակով եղել է առաջատար դպրոցների շարքում: 1880-1881 ուս. տարում դպրոցում սովորել է 42[11]*, 1881-1882-ին՝ 42*[12]*, 1882-1883-ին՝ 60*[13] *աշակերտ:*

Արդեն նշվեց, որ դպրոցների փակումից հետո ձեռնարկվում էին համառ քայլեր դրանց վերաբացման ուղղությամբ: 1887 թ. հոկտեմբերի 29-ին Վրացա-իմերեթական թեմի առաջնորդը գրություն է ուղարկում Ջալալօղլի գյուղի տանուտեր Սահակ Սահակյանին, որով հանձնարարում է «յորդորել զժողովուրդն անկասկած լինել վասն հոգատարութեան մերոյ ի բացումն ծխկ. (ծխական - Գ. Կ., Ե. Մ.) դպրոցաց տեղւոյդ»[14]*: Նկատելի է, սակայն, որ դպրոցը Լոռու գավառում վերաբացված դպրոցների շարքում առաջիններից է: Շուլավերի գործակալի՝ թեմի առաջնորդին գրած պատասխան նամակում կարդում ենք. «...ի Լօռուոյ գործակալութեան զերկուս միայն ունիմք ծխական դպրոցս՝ ի Ջալալ-օղլի եւ ի Դսեղ»*[15]*:*

1887 թ. դեկտեմբերի 15-ին վերաբացվում է գյուղի դպրոցը, որը նախատեսված էր միայն տղաների համար: Այն ուներ 70 աշակերտ, դասերն անցկացվում էին վարձակալված «մասնաւոր շինութեան մէջ»: Այս շրջանում դպրոցում դասավանդել են Մինաս Անդրեասի Խուբլարյանցը, Մկրտիչ Տեր-Հակոբյանը, Գրիգոր Հովհաննեսի Պետրոսյանցը[16]*: Դպրոցում սովորել են հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների երեխաներ: 1888 թ. կազմված տեղեկագրում նշվում է, որ դպրոցի 71 աշակերտներից 1-ը եղել է հոգեւորականի որդի, 2-ը՝ ազնվականի, 18-ը՝ վաճառականի, 8-ը՝ արհեստավորի, 42-ը՝ երկրագործի*[17]*:*

1888 թ. վերաբցվել է նաեւ գյուղի իգական դպրոցը, որն այս անգամ գոյատեւել է շատ կարճ ժամանակ: Այն եւս գործել է վարձակալված մասնավոր տան մեջ եւ ունեցել է 1 ուսուցիչ՝ Մարգարիտ Մարգարյանց[18]*: Հաջորդ*

---

[10] Անդ, ֆ. 53, g. 1, գ. 3998, թ. 59:

[11] Տես անդ, ֆ. 56, g. 1, գ. 7064, թ. 15:

[12] Տես անդ, թ. 24:

[13] Տես անդ, թ. 40 շրջերես:

[14] Անդ, ֆ. 35, g. 1, գ. 9, թ. 12:

[15] Անդ, գ. 763, թ. 6:

[16] Տես անդ, ֆ. 53, g. 1, գ. 4004, թ. 68-69:

[17] Տես անդ, ֆ. 48, g. 1, գ. 305, թ. 11:

[18] Տես անդ, ֆ. 35, g. 1, գ. 8, թ. 55 շրջ.-56:

տարի Ջալալօղլու երկսեռ դպրոցների հոգաբարձությունը դիմում է Վրացա-իմերեթական թեմի առաջնորդին՝ իգական դպրոցի գործունեությունը դադարեցնելու խնդրանքով. դա բացատրվում էր ֆինանսական համապատասխան միջոցներ չունենալով: Թեմի առաջնորդը պատասխան գրությամբ բավարարում է խնդրանքը, որով իգական դպրոցը փակվում է[19]*:*

Իգական դպրոցը գարթոնք է ապրում 1890-ական թվականների սկզբին: 1893 թ. օգոստոսի 22-ին Ջալալօղլու դպրոցի հոգաբարձունները դիմում են Վրաստանի եւ Իմերեթի հայկական դպրոցների տեսչին. հայտնելով գյուղի բնակչության՝ իգական դպրոցը վերաբացելու ցանկության մասին՝ խնդրում էին թույլտվություն ստանալու համար միջնորդել կաթողիկոսի առջեւ[20]*: 1893 թ. սեպտեմբերի 3-ին թեմական առաջնորդը հայտնում է հոգաբարձուներին, որ Ամենայն Հայոց Հայրապետից ստացել է թույլտվություն եւ «այսու թոյլատրում եմ գիւղումդ օրիորդաց միդասեան դպրոց բանալ»*[21]*:*

Դպրոցը վերաբացվում է 1893 թ. սեպտեմբերի 30-ին, իսկ դասերը կանոնավոր ընթացքի մեջ են մտնում հոկտեմբերի 15-ից. կրթօջախն ունեցել է 40 աշակերտուհի: Դպրոցում դասավանդելու էին Եղիա Զոհրաբյանցը, Գարեգին Շահինյանցը, Արուսյակ Հեջուբյանցը, Մկրտիչ քհն. Տեր-Հակոբյանցը[22]*: Դպրոցն ունենալու էր 2 բաժանմունք եւ գործելու էր Միխայել Սահակյանից վարձած տանը*[23]*. հետագայում բացվելու էր նաեւ երրորդ բաժանմունքը:*

1891 թ. տեղի են ունենում կառուցվածքային փոփոխություններ գյուղի արական դպրոցում: Ուսուցիչ Ալեքսանդր Բաղչինյանցին հանձնարարվում է աշակերտներին բաժանել առանձին խմբերի: Ստեղծվում են Ա., Բ. եւ Գ. բաժանմունքներ, որոնք ունեին իրենց առանձին ծրագրերը[24]*: Աշակերտների թվաքանակի ավելացմամբ պայմանավորված՝ 1910 թ. ստեղծվում է նաեւ 4-րդ բաժանմունքը*[25]*: 1891-ից դպրոցը գործել է Մովսես Սարիբեկյանից վարձած տանը*[26]*:*

---

[19] Տես անդ, ֆ. 53, g. 1, գ. 4006, թ. 225-226:

[20] Տես անդ, ֆ. 637, g. 1, գ. 290, թ. 2-3:

[21] Անդ, թ. 1:

[22] Տես անդ, գ. 293, թ. 74:

[23] Տես անդ, գ. 286, թ. 67:

[24] Տես անդ, գ. 106, թ. 19-19 շրջ.:

[25] Տես անդ, ֆ. 35, g. 1, գ. 658, թ. 7:

[26] Տես անդ, ֆ. 637, g. 1, գ. 286, թ. 66:

Նախորդ տարիների համեմատ ավելացել էր աշակերտների թվաքանակը: 1893-1894 ուս. տարում դպրոցում սովորում էին 84 տղա եւ 40 աղջիկ, հաջորդ ուս. տարում՝ 84 տղա եւ 42 աղջիկ[27]*: Դպրոցում դասավանդվում էին կրոն, երգեցողություն, հայոց լեզու եւ վայելչագրություն, ռուսաց լեզու եւ վայելչագրություն, թվաբանություն, գծագրություն, պատմություն, աշխարհագրություն, մեղվաբուծություն, միայն աղջիկների համար նաեւ ձեռագործություն առարկաները: Դպրոցում կազմակերպվում էին նաեւ տարբեր միջոցառումներ: 1893-1894 ուս. տարում թե՛ արական, թե՛ իգական դպրոցներում կազմակերպվել են միջոցառումներ օրիորդաց դպրոցի վերաբացման եւ Ս. Թադեոսի ու Ս. Բարդուղիմեոսի տոները նշելու համար:*

Դպրոցների փակման քաղաքականությունը ցարական կառավարությունը վերսկսում է 1890-ական թվականների կեսերին, որի հետեւանքով 1896 թ. փետրվարի 12-ին փակվում է նաեւ Ջալալօղլու դպրոցը: Այդ օրը դպրոցի ավագ ուսուցչի պաշտոնակատար Արիստակես քհն. Աբովյանցը Վրաստանի եւ Իմերեթի թեմի հայկական դպրոցների տեսչին հայտնում է. «Շտապում ենք, ցաւոք սրտի, ածել ի գիտութիւն բարեկրօնութեանդ, այսօրուանից իմ առաջնորդութեանն յանձնուած ուսումնարաններում ուսմունքն ընդհատելու ստիպուեցանք»[28]*:*

Արխիվային փաստաթղթերում չկան տեղեկություններ 1896-1905 թթ. ընթացքում Ջալալօղլու դպրոցի գործունեության վերաբերյալ: Պետք է ենթադրել, որ այս ընթացքում դպրոցը փակված է մնացել: Այն վերաբացելու քայլեր են ձեռնարկվել արդեն 1905 թ., երբ Ռուսաստանի ցարը չեղյալ է հայտարարել իր կողմից 1903 թ. հունիսի 12-ին ընդունված՝ եկեղեցապատկան կալվածքների բռնագրավման վերաբերյալ օրենքը, որով հնարավորություն ստեղծվեց դպրոցական կյանքի վերակենդանացման համար[29]*:*

Լոռու գործակալ Հովհաննես քհն. Վերանյանի կողմից 1906 թ. փետրվարին կազմված ցուցակից պարզ է դառնում, որ Ջալալօղլու երկսեռ դպրոցը վերաբացվել է 1905 թ. նոյեմբերի 10-ին[30] *եւ իր գործունեությունը*

---

[27] Տես անդ, գ. 298, թ. 50 եւ 66:

[28] Տես անդ, գ. 342, թ. 24:

[29] Եկեղեցական կալվածքների բռնագրավումը, բնականաբար, ենթադրում էր հարված եկեղեցական եկամուտներին, որը եւ հանգեցնում էր դպրոցական կյանքի խաթարմանը, քանի որ դպրոցները պահվում էին այդ եկամուտներով:

[30] Տես անդ, ֆ. 35, ց. 1, գ. 175, թ. 24:

շարունակել մինչեւ Առաջին աշխարհամարտը: 1906-1907 ուս. տարում դպրոցում սովորել են 135 տղա եւ 106 աղջիկ[31], իսկ հաջորդ տարում՝ համապատասխանաբար 123 եւ 117 աշակերտ[32]:

Դպրոցի գործունեության ընթացքում դժվար լուծելի է եղել անհրաժեշտ պայմաններ ունեցող դպրոցական շենք ունենալու խնդիրը: Սկզբնական շրջանում դպրոցը գործել է տարբեր անհատներից վարձակալած տներում, որոնք չեն ունեցել դպրոցական շենքի համար անհրաժեշտ պայմաններ: 1894 թ. հունվարի 30-ին Վրաստանի եւ Իմերեթի թեմի հայկական դպրոցների տեսչին ուղարկված գրությամբ դպրոցի ավագ ուսուցիչ Եղիա Զոհրաբյանը հայտնում է. «Դպրոցների համար վարձուած շինութիւնները դպրոց լինելու հարմարութիւնից զուրկ են... մտադրութիւն կայ գարնանը դպրոցապատկան ընդարձակ գետնի վրայ նոր շինութիւն կառուցանելու»[33]: Շենքերի անհարմարության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ են հայտնում 1893-1894 թթ. համար կազմված տեղեկագրերը, ըստ որոնց՝ արական դպրոցի համար վարձված շենքը ունեցել է «2 փոքր, վատ լուսաւորուած սենեակ», իսկ իգականինը՝ «սենեակը խիստ ցած է եւ լուսաւորութիւնը՝ անկանոն»[34]: Դպրոցական սեփական շենք կառուցելու մտադրությունը անկատար մնաց՝ դպրոցների փակմամբ պայմանավորված:

1905 թ. վերաբացումից հետո ձեռնարկվում են քայլեր դպրոցական շենքի շինարարության կազմակերպման ուղղությամբ: 1907 թ. տեղեկագրի համաձայն՝ դպրոցն ունեցել է սեփական շենք[35], որը եղել է ոչ ավարտուն վիճակում: Դպրոցական շենքի կառուցման գործում մեծ ավանդ են ունեցել Արշակ Դավթյանի կինը՝ Նատալյա Դավթյան-Հովհաննիսյանը, եւ դստերը: 1906-ից՝ Արշակ Դավթյանի մահից հետո, կինը եւ դուստրերը նրա հիշատակը հավերժացնելու համար դպրոցի հոգաբարձությանն են հատկացնում 7000 ռուբլի գումար՝ դպրոցական շենքի կառուցման համար[36]: 1910 թ. մարտի 24-ին Վրաստանի եւ Իմերեթի թեմի առաջնորդը գրություն է ուղարկում Նատալյա Դավթյանցին, որով տեղեկացնում է, որ վերջինս պարգեւատրվել է կաթողիկոսական երախտագիտության

---

[31] Տես անդ, գ. 174, թ. 22 շրջ.-23:

[32] Տես անդ, ֆ. 56, g. 15, գ. 182, թ. 39 շրջ.-40:

[33] Տես անդ, ֆ. 637, g. 1, գ. 271, թ. 25:

[34] Անդ, գ. 286, թ. 66-67:

[35] Տես անդ, ֆ. 35, g. 1, գ. 174, թ. 131:

[36] Տես անդ, գ. 572, թ. 11. նաեւ՝ գ. 445, թ. 9:

կոնդակով եւ նշանակվել դպրոցի հոգաբարձուների խորհրդի պատվավոր անդամ[37]:

Իր գործունեության ընթացքում դպրոցն ունեցել է դժվարություններ՝ կապված ֆինանսական բավարար միջոցների հայթայթման հետ: Դպրոցի համար դրամական միջոցների աղբյուրներ էին գյուղի բնակչության նվիրատվությունները, թոշակադրամները, եկեղեցական օգնությունը եւ ձեռագործերի վաճառքից ստացված գումարները:

Հոգաբարձուների եւ գյուղացիների միջեւ ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ դպրոցի պահպանության համար գյուղացիները յուրաքանչյուր տարի դպրոցին տրամադրելու էին որոշակի գումար: Կապված դպրոցի տվյալ տարվա ծախսերի հետ՝ այդ չափը կարող էր փոփոխվել:

Թոշակադրամները վճարվում էին աշակերտ-աշակերտուհիների կողմից՝ որպես տարեկան վարձ: Այն կազմում էր շուրջ 4 ռուբլի[38]: Կրթությունը բոլորին հասանելի դարձնելու նպատակով դպրոցում հնարավորություն է ստեղծվել ուսանելու «ձրիավարժ» սկզբունքով, այսինքն՝ առանց թոշակադրամի վճարման:

Դպրոցի առաջին վերաբացումից հետո եկեղեցին իր եկամուտներից գումար է հատկացրել դպրոցի գործունեության ապահովման համար: 1888 թ. նոյեմբերի 10-ի գրությամբ Ջալալօղլու երկսեռ դպրոցի հոգաբարձությունը, նախապես ներկայացնելով դպրոցի նյութական ծանր վիճակը, Վրաստանի եւ Իմերեթի թեմի առաջնորդին խնդրում է, որ տեղի եկեղեցու եկամուտների մի մաս հատկացնի դպրոցին[39]: Թեմական առաջնորդը պատասխան գրությամբ հայտնում է, որ այսուհետ դպրոցին է հատկացվելու մոմավաճառությունից ստացված եկամուտից տարեկան 120 ռուբլի[40]:

Դպրոցը նյութական որոշ միջոցներ էր ստանում ձեռագործերի վաճառքից:

Գումարների հավաքագրման հարցում դպրոցի հոգաբարձությունը հաճախ հանդիպում էր դժվարությունների, եւ կուտակվում էին

---

[37] Տե՛ս անդ, թ. 13:

[38] 1894-1895 ուս. տարում դպրոցում սովորող 128 աշակերտներից հավաքվել է 600 ռուբլի թոշակադրամ, որը 1 աշակերտի հաշվով կազմում է 4 ռուբլի (եթե նկատի ունենանք նաեւ «ձրիավարժ» աշակերտների առկայությունը). անդ, գ. 77, թ. 124 շրջ.:

[39] Տես անդ, ֆ. 53, ց. 1, գ. 4005, թ. 155 շրջ.:

[40] Տես անդ, թ. 159:

մեծ պարտքեր: Խնդրից անհանգստացած՝ դպրոցի հոգաբարձությունը 1888 թ. նոյեմբերի 10-ին դիմում է Վրաստանի եւ Իմերեթի թեմի առաջնորդին. «Սրբազան Հայր, արդէն տասներորդ տարին է, որ պարտապանների վրայ մնում է յիշեալ դրամագլուխը՝ առանց առնելու կամ մուրհակները փոխելու (մինչեւ այժմ ոչ մի պարտապան կամք չէ յայտնում վճարելու իւր պարտքը): Ուստի հոգաբարձութիւնս հարմար է տեսնում, որ դատաստանական ճանապարհով առնուի պարտապաններից դրամագլխի գոնէ մի մասը»[41]: Դատական գործընթացը տեղի է ունենում 1889 թ., որը բավարարում է դպրոցի պահանջը եւ հնարավորություն ընձեռում հավաքելու պարտքերը[42]:

Ջալալօղլու դպրոցում որպես ուսուցիչ աշխատել են Տիգրան Վերանյանը, Գեւորգ Կուլիջանյանցը, Մարգարիտ Մարգարյանը, Եսայի քհն. Տեր-Աբովյանցը, Մկրտիչ քհն. Տեր-Հակոբյանցը, Արշակ Ագաբյանցը, Եղիա Զոհրաբյանը, Գարեգին Շահինյանը, Արուսյակ Հեջուբյանը, Ալեքսանդր Բաղջինյանցը, Անդրեաս Միրաքյանցը, Արիստակես քհն. Տեր-Աբովյանցը, Միքայել Տեր-Մարտիրոսյանը, Սարգիս Սահակյանը, Նատալյա Կարապետյանը, Սարգիս Խանաղյանը, Խորեն Երիցյանը, Գեղամ Տեր-Խաչատրյանցը, Անուշավան Զոհրաբյանը եւ ուրիշներ:

Դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամներ են եղել Դանիել Զիթյանցը, Նավասարդ Ջաղինյանցը, Նիկողայոս Հայրապետյանցը, Բարսեղ Մարտիրոսյանցը, Մկրտիչ Ստեփանյանը, Աղաջան Սահակյանը, Մկրտիչ Վարդազարյանը, Եսայի քհն. Տեր-Աբովյանցը, Հայրապետ Տեր-Հակոբյանը, Լեւոն Մկրտչյանը, Մկրտիչ Վարդազարյանը, Գրիգոր Ներկարարյանը եւ ուրիշներ:

Այսպիսով, Ջալալօղլու դպրոցը, հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ, կարողացել է ապահովել մատաղ սերնդի կրթությունը. ընդ որում, ստեղծվել են գրեթե հավասար պայմաններ տղաների եւ աղջիկների համար[43]: Կրթությունը եղել է բազմաբովանդակ՝ կրոնից մինչեւ լեզուներ, պատմություն, աշխարհագրությունից մինչեւ գործնական գիտելիքների փոխանցում:

---

[41] Անդ, թ. 155:

[42] Տես անդ, գ. 4008, թ. 1-85:

[43] Սկզբնական շրջանում տղաների համեմատ աղջիկների թիվը նվազ է եղել. այսպես՝ 1893-1894 թթ. դպրոց են հաճախել 84 տղա եւ 40 աղջիկ այն դեպքում, երբ գյուղի տղամարդկանց եւ կանանց թվաքանակը գրեթե հավասար է եղել՝ համապատասխանաբար 790 եւ 780. տես անդ, ֆ. 637, ց. 1, գ. 286, թ. 67:

РЕЗЮМЕ

Джалалоглинская школа была основана в 1878-1879 гг. и организовала обучение представителей обоих полов в равной степени. Во время своей деятельности, школа столкнулась с множеством трудностей: начиная с нехватки финансовых проблем до периодического закрытия. Школа сумела преодолеть все эти трудности и дала достаточное образование. В школе преподавали армянский и русский языкы, арифметику, историю, религию, пчеловодство и другие предметы. Преподавали учителя, которые прошли педагогическое обучение.

SUMMARY

The Jalalogli school was founded in 1878-1879 and organized the educational process of representatives of both sexes equally. During its activity, the school faced many difficulties: beginning with financial insufficiency to the periodic closure. However, the school managed to overcome all these difficulties and provided adequate education. Armenian and Russian languages, arithmetics, history, religion, apiculture and other subjects were taught there. Teachers with the experience of pedagogical trainings taught at school.